ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱԶՈ» (ԱԺԱՐՈՅԶԻԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 89 - 90 (16484) ՇԱԲԱԹ, 12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՇՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



Ինչպես հաղորդել էինք նախորդ համարում, նոյեմբերի 4-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Վրաստան-Հայաստան սահմանային Սադախլո-Բագրատաշեն անցակետում, ծանոթացան Ղեբեդ գետի վրա «Բարեկամության կամուրջի» կառուցման նախապատրաստական աշխատանքներին եւ մասնակցեցին Բագրատաշենում սահմանային նոր անցակետի բացման հանդիսավոր արարողությանը: Միջոցառումների ավարտին հաջորդեց Գիորգի Կվիրիկաշվիլու եւ Սերժ Սարգսյանի առանձնազրույցը:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը կարեւորեց հայ-վրացական բարձր մակարդակի կանոնավոր շփումները, որոնք, նրա համոզմամբ, նպաստում են հայ-վրացական հարաբերությունների ամրապնդմանն ու հնարավորություն ընձեռում կառուցողական եւ ջերմ մթնոլորտում քննարկել երկկողմ օրակարգի փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Սերժ Սարգսյանը Գիորգի Կվիրիկաշվիլուն եւ Վրաստանի բոլոր քաղաքացիներին շնորհավորեց խորհրդարանական ընտրությունների հաջող անցկացման եւ «Վրացական երազանք» կուսակցության համոզիչ հաղ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆՉԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ԿԼԻՆԻ Ե'Վ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ, Ե'Վ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Նորընտիր խորհրդարանի անդրանիկ նիստում, նորընտիր մյուս պատգամավորների հետ միասին, կճանաչվեն նաեւ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու պատգամավորական լիազորությունները:

Խորհրդարանի անդամներ կդառնան եւ համապատասխան երդման արարողությանը կմասնակցեն նաեւ Կախի Կալաձեն եւ Գիորգի Գախարիան, ովքեր, առկա տեղեկատվությամբ, նախարարական պաշտոններ են զբաղեցնելու նոր կառավարության կազմում:

Կախի Կալաձեի եւ Գիորգի Գախարիայի պաշտոնական ան-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է

Նոյեմբերի 10-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Հավլաբարի նախագահական նստավայրում մասնակցեց Վրաստանում հանդուրժողականության շաբաթի բացման արարողությանն ու ներկա գտնվեց ազգային փոքրամասնությունների հարցերով նախագծերի պետության ղեկավարի պահուստային հիմնադրամից ֆինանսավորված բրոշյուրների շնորհանդեսին:

Հանդուրժողականության շաբաթվա բացմանը Գիորգի Մարգվելաշվիլին խոսեց ազգային փոքրամասնությունների, լեզվի զարգացման, հանդուրժողականության եւ ինտեգրման կարեւորության մասին եւ նշեց, որ Վրաստանում ապրող ազգերի ինքնությունը, որը պահպան-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐՎԵՑ ԲԱՐՁՐԱԼԵՌ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ

Նոյեմբերի 11-ին,Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որի ընթացքում քննարկվեցին 21 հարցեր:

Կառավարությունը հավանություն տվեց «Բաց կառավարման գործընկերության» 2016-2017 թվականների գործողության ծրագրին, որի նորամուծություններից մեկը մունիցիպալիտետների ներգրավումն է:

Նիստում հավանություն տրվեց նաեւ «Առանձին արտադրական սուբյեկտներին բարձրալեռ արտադրության կարգավիճակի շնորհման մասին» կառավարության որոշմանը: Նշվեց, որ սույն նախագծի ընդունումից հետո 23 արտադրական սուբյեկտների կշնորհվի բարձրալեռ արտադրության կարգավիճակ, ինչի հիման վրա դրանք Վրաստանի հարկային օրենսգրքով սահմանված ժամկետներով ու կարգով կազատվեն հարկերի վճառումից:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԻ

Ցանկալի կլիներ, եթե կարգավորվեին ընտրությունների ժամանակ բացահայտված թերացումները եւ ընտրական օրենսդրությունը կատարելագործվեր:

Նման կարծիք հայտնեցին եվրախորհրդարանականները, ովքեր Եվրախորհրդի արտաքին կոմիտեի նիստում քննարկեցին Վրաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունները:

Եվրախորհրդարանի դիտորդական առաքելության ղեկավար

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՁԵ. «ՎՐԱՑԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ԲԱՑ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Նոյեմբերի 9-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն, երկկողմ համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով, հանդիպում ունեցավ Հայաստանի գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանի հետ:

Ինչպես նշվեց հանդիպմանը երկու երկրների գյուղատնտեսության ոլորտում ձեւավորվել է ամուր համագործակցություն, կազմակերպվել են գյուղատնտեսության նախարարների փոխայցեր: «Սակայն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱՅՆՔ

ԴԱՎԻԹ ՃԻՃԻՆԱՁԵԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԱՀԱՅԵՐԻՆ

2016 թվականի նոյեմբերի 6-ին, Վրաստանի 9-րդ գումարման խորհրդարանի ընտրությունների ժամանակ իր հանդեպ ցուցաբերած վստահության համար երախտագիտություն եւ շնորհակալություն հայտնելու նպատակով, Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցի էր եկել Իսանիի շրջանից մեծամասնական համակարգով Վրաստանի խորհրդարան ընտրված պատգամավոր Դավիթ Ճիճինաձեն:

Վրաստանի խորհրդարանի նորընտիր անդամը՝ ի դեմս եկեղեցու հավատացյալների, Իսանիի շրջանի հայ ազգաբնակչությանը շնորհակալություն հայտնեց ընտրությունների ժամանակ հօգուտ իրեն քվեարկելու համար: Դավիթ Ճիճինաձեն վերահաստատեց նախընտրական խոստումները եւ հանձնառու եղավ իր պատգամավորության տարիներին օժանդակել թբիլիսահայ համայնքին, առկա եւ ծագած հիմնախնդիրների կարգավորման գործում:

ԱՄՆ

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ՝ 45-ՐԴ ՆԱԽԱԳԱՀ

Նոյեմբերի 8-ին ԱՄՆ-ում անցկացված նախագահական ընտրություններին հաղթող ճանաչվեց հանրապետական Դոնալդ Թրամփը:

Դեմոկրատ Հիլլարի Քլինթոնի հետ մենամարտում Թրամփը, ընդհանուր առմամբ, 538 ընտրողների ձայներից անհրաժեշտ 270-ի փոխարեն, ապահովեց 289-ի աջակցությունը:

Կյանքի 70-րդ տարում զբաղեցնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը՝ Թրամփը

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԳԾՎԵՑ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՇՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

թանակի կապակցությամբ: Հայաստանի նախագահը վստահություն հայտնեց, որ Վրաստանի նոր խորհրդարանն ու կառավարությունը հետեւողականորեն կշարունակեն բարեփոխումների քաղաքականությունը՝ ի նպաստ Վրաստանի հետագա զարգացման ու բարգավաճման, ինչպես նաեւ հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների առավել ամրապնդման:

Զրուցակիցները գոհունակությամբ նշեցին, որ երկու բարեկամ եւ հարեւան պետությունները հետեւողական զարգացնում են քաղաքական փոխգործակցությունը, ակտիվացնում միջպետական շփումները՝ այդպիսով ամուր հիմք ստեղծելով երկկողմ հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացնելու համար:

Հանդիպմանը Վրաստանի վարչապետը եւ Հայաստանի նախագահն անդրադարձան առեւտրատնտեսական փոխգործակցության ընդլայնման հնարավորություններին, այդ թվում՝ տրանսպորտային հաղորդակցության, էներգետիկայի, զբոսաշրջության, գյուղատնտեսության եւ մի շարք այլ ոլորտների:

Վրաստանի վարչապետը Հայաստանի նախագահին շնորհավորեց նորակառույց սահմանային անցակետի բացման կապակցությամբ: Նշելով, որ զգալի աշխատանք է կատարվել, Գիորգի Կվիրիկաշվիլին կարեւորեց ենթակառույցների արդիականացման ուղղությամբ իրականացված աշխատանքը, որը, նրա համոզմամբ, կնպաստի Հայաստանի տնտեսության զարգացմանը, ինչպես նաեւ վրացահայկական առեւտրատնտեսական փոխգործակցության խորացմանը:

Գիորգի Կվիրիկաշվիլին եւ Սերժ Սարգսյանը մտքեր փոխանակեցին նաեւ միջազգային եւ տարածաշրջանային արդի խնդիրների շուրջ:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆՉԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ԿԼԻՆԻ Ե'Վ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ, Ե'Վ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

համատեղությունը եւ պատգամավորական իրավասությունների կանգնեցման պահանջը կբարձրացվի նրանից հետո, երբ նորընտիր խորհրդարանը վստահության քվե կհանձնի կառավարությանը եւ կպաշտպանի կառավարության կազմում նրանց թեկնածությունը: Դրանից հետո խորհրդարանի աշխատակարգը նախատեսում է պատգամավորական լիազորությունների կանգնեցման ընթացակարգ:

Ինչ վերաբերում է Գիորգի Կվիրիկաշվիլուն, ապա, տվյալ պարագայում մոտեցումն այլ է, քանի որ նա ներկայիս վարչապետն է եւ խորհրդարան է մուտք գործում վարչապետի կարգավիճակով: Նորընտիր խորհրդարանի լիազորությունների ճանաչման պահից կառավարության լիազորությունները դադարեցվում են, եւ Կվիրիկաշվիլին դառնում է վարչապետի պաշտոնակատար: Հետեւաբար, որոշ ժամանակ, մինչեւ նոր կառավարության ձեւավորումը, Գիորգի Կվիրիկաշվիլին միաժամանակ կլինի ե'ւ խորհրդարանի պատգամավոր, ե'ւ վարչապետի պաշտոնակատար: Խորհրդարանի կողմից նոր կառավարությանը վստահության քվեի հանձնումից անմիջապես հետո, խորհրդարանը դադարեցնելու է Գիորգի Կվիրիկաշվիլու պատգամավորական լիազորությունները:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԻՈՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՋԵ. «ՎՐԱՑԱԿԱՆ ՇՈՒԿԱՆ ԲԱՑ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

երկու երկրների միջեւ գյուղատնտեսության ոլորտում առկա են լայն հնարավորություններ եւ դեռեւս չօգտագործված մեծ ներուժ, եւ հարկավոր է միջոցներ ձեռնարկել երկկողմ համագործակցությունն ավելի ակտիվացնելու ուղղությամբ»,- հայտարարեց Հայաստանի գյուղատնտեսության նախարարը:

Իր հերթին, ընդգծելով, որ վրացական շուկան միշտ բաց է հայկական գյուղատնտեսական արտադրանքի համար՝ Գիորգի Սագանելիձեն վստահեցրեց, որ իր գործունեության ընթացքում կանի հնարավորը այս ոլորտում երկկողմ հարաբերությունները խորացնելու, ինչպես նաեւ վրաց-հայկական գործարար կապերն ընդլայնելու ու ամրապնդելու համար:

Հանդիպմանը Գիորգի Սագանելիձեն Իգնատի Առաքելյանին հրավիրեց այցելել Վրաստան՝ տեղում հարեւան երկրի գյուղատնտեսության բնագավառի ներկա վիճակին ծանոթանալու նպատակով: Ի պատասխան՝ Հայաստանի գյուղատնտեսության նախարարը դեսպանին խնդրեց իր վրաց գործընկերոջը փոխանցել Հայաստան այցելելու հրավերը:

ԳԼԽԱՎՈՐ ԹԵՄԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄՆ ԷՐ

Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլու հրավերով, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաքոյանը:

Նոյեմբերի 7-ին Վրաստանի օմբուդսմենի գրասենյակում տեղի ունեցավ Ուչա Նանուաշվիլու հանդիպումը Արման Թաքոյանի եւ նրա գլխավորած պատվիրակության անդամների հետ:

Հանդիպմանը Վրաստանի օմբուդսմենը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրեց Վրաստանում Ժողովրդի պաշտպանի աշխատակազմի կառուցվածքն ու գործունեության հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ աշխատանքի ծավալներն ու դրանց կազմակերպման սկզբունքները, խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատանքները, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաեւ մարդու իրավունքների կրթությանն առնչվող հարցեր:

Իր հերթին, Արման Թաքոյանը խոսեց Հայաստանում Ժողովրդի պաշտպանի աշխատակազմի, իրականացվող աշխատանքների եւ ոլորտում նախատեսվող օրենսդրական փոփոխությունների մասին: Քննարկվեցին նաեւ հարցեր՝ կապված ազատազրկման սկզբնական փուլերում՝ անձանց իրավունքների ապահովման մեխանիզմների կատարելագործման հետ:

Կողմերը պայմանավորվեցին նաեւ քայլեր ձեռնարկել՝ խորացնելու համագործակցությունը մարդու իրավունքների պաշտպանության, իրավունքների իրագեկման եւ փորձի փոխանակման ոլորտներում: Հանդիպման ավարտին Արման Թաքոյանն իր վրաց գործընկերոջը հրավիրեց Հայաստան:

ԱՄՆ

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ՝ 45-ՐԴ ՆԱԽԱԳԱՀ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կդառնա առաջին անգամ պաշտոնավարող ամենատարեց ԱՄՆ նախագահը:

Դոնալդ Թրամփը ծնվել է 1946 թվականին՝ Նյու Յորք քաղաքում՝ մեծահարուստ գործարար, ծագումով գերմանացի Ֆրեդ Թրամփի ու Մերի Էնի ընտանիքում:

Ավարտել է Փենսիլվանիայի համալսարանի Ուորթոնի դպրոցի տնտեսագիտության բակալավրիատը: Շարունակելով հոր ճանապարհը, սկսել է լայնորեն ընդլայնել իր բիզնես կայսրությունը: Հայտնի է նաեւ որպես «The Trump Organization» կազմակերպության նախագահ եւ գործադիր տնօրեն, «Trump Entertainment Resorts» ընկերության հիմնադիր: 1996-2015 թվականներին հանդես է եկել «Միսս ԱՄՆ» գեղեցկության հայկական գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ: 2016 թվականին «Ֆորբս» պարբերականի կողմից դասվել է որպես աշխարհի 324-րդ եւ ԱՄՆ-ի՝ 156-րդ ամենահարուստ անձը:

Թրամփը նախագահի լիազորությունները կստանձնի 2017 թվականի հունվարի 20-ին:

Ամուսնացած է: Կինը սլովենուհի Մելանյա Կնավսն է: Ունի 5 երեխա, 8 թոռ:

ԱՄՆ նախագահական ընտրություններում հաղթելու կապակցությամբ՝Դոնալդ Թրամփին շնորհավորական ուղերձներ են հղել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:



ԱՄՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՍՊԻՏԱԿ ՏԱՆԸ

Նոյեմբերի 10-ին ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփը Սպիտակ տանը հանդիպում ունեցավ գործող նախագահ Բարաք Օբամայի հետ:

Օբաման Թրամփին Սպիտակ տուն էր հրավիրել՝ իշխանությունը փոխանցելու մանրամասները քննարկելու համար:

Դոնալդ Թրամփի՝ ԱՄՆ-ի նախագահ ընտրվելու կապակցությամբ բողոքի ցույցեր տեղի ունեցան, մասնավորապես, Կալիֆոռնիայի, Իլինոյսի, Տեխասի, Վաշինգտոնի, Նյու Յորքի եւ Օրեգոնի նահանգներում:

Ընտրությունների արդյունքներով Հանրապետական կուսակցությունը պահպանել է վերահսկողությունը ԱՄՆ-ի Կոնգրեսի Սենատի նկատմամբ: Այդպիսով, հանրապետականների ձեռքում են հայտնվել Կոնգրեսի երկու պալատները, հետեւաբար կուսակցությունը վերահսկողություն կհաստատի ֆեդերալ, գործադիր եւ օրենսդիր իշխանության նկատմամբ, ինչը նրան թույլ կտա զգալիորեն փոխել երկրի օրենսդրությունը:

ԵՎՐԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՄԵՆԱԲԱՑԱՍԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Եվրահանձնաժողովի կողմից նոյեմբերի 9-ին ներկայացված Առաջընթացի զեկույցը մինչ օրս հրապարակված զեկույցներից ամենաբացասական գնահատականներն է պարունակում Թուրքիայի համար:

Շուրջ 100 էջից բաղկացած զեկույցում նշվում է, որ հատկապես հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման փորձից հետո մեծ թվով լրագրողներ են ձերբակալվել, իսկ լրատվամիջոցները փակվել են:

Զեկույցում նշվել է, որ հեղաշրջման փորձից հետո աշխատանքից հեռացվել կամ ձերբակալվել է 110 հազար զինվորական, ոստիկան, դատավոր եւ դատախազ, ովքեր մեղադրվում են գյուլենականներին հարելու մեջ:

ԻՐԱՔ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃՈՒՄ Է

Գրեթե 42 հազար բնակիչներ հարկադրված են եղել լքել իրենց տները «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման զինյալներից իրաքյան Մոսուլի ազատագրման գործողության սկսվելուց ի վեր:

Վերաբնակների մեծամասնությունը գտնվում է ճամբարներում եւ շտապ տեղավորման կետերում:

Իրաքի հյուսիսում ԻՊ-ի զինյալներից Մոսուլի ազատագրման գործողությունը, որոնք քաղաքը գրավել են 2014 թվականին, շարունակվում է հոկտեմբերի 17-ից: Դրան մասնակցում են Իրաքի զինվորականները, տեղի աշխարհազորայինները, քրդական զինված կազմավորումները, ինչպես նաեւ ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կոալիցիայի ռազմաօդային ուժերը:

ԵՄ

ՍԵՎ ՑՈՒՑԱԿՈՒՄ՝ ՊԵՏԴՈՒՄԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ

Եվրամիությունը Ռուսաստանի եւ Ուկրաինայի համար կազմված սեւ ցուցակ է մտցրել Ղրիմից եւ Սեւաստոպոլից ՌԴ-ի Պետդումայի բոլոր պատգամավորներին:

Ցուցակում ներառվել են Ղրիմից հինգ պատգամավորներ, եւս երկու ղրիմցի պատգամավորներ արդեն ներառված են ԵՄ-ի սեւ ցուցակում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԵՐԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վել է դարերի ընթացքում, հանդիսանում է երկրի հարստությունը:

Վրաստանի նախագահի պահուստային հիմնադրամի աջակցությամբ ֆինանսավորվել են այնպիսի նախագծեր, ինչպիսիք են «Սովորում ենք վրացերեն»՝ պետական լեզվի ուսուցման ծրագիրը, վրաց-օսեթական գիտա-հետազոտական կենտրոնը, Աբխազիայի վիրտուալ արխիվը, ազգային փոքրամասնությունների երիտասարդների ինտեգրման աջակցությունը, ազգային փոքրամասնությունների կողմից երկրի եվրատլանտյան միտման աջակցությունը, վրաց հանդուրժողականությունը Այետի թագավորից մինչեւ մեր օրերը, վաղ ամուսնության թեմայով աշակերտների հետ հանդիպումները, գյուղական գրադարանների համացանցումը եւ այլն:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Աննա Գոմեսը ներկայացրեց զեկուցագիր, որը հրապարակվեց ընտրությունների երկրորդ փուլից հետո: Նրա խոսքով, սահմանադրական մեծամասնության պայմաններում կառավարող թիմն ստանձնում է որոշումների թափանցիկության եւ ժողովրդավարական, փոխզիջման ուղիով դրանց ընդունման պատասխանատվությունը: Նա ընդգծեց նաեւ ընտրություններից հետո անկախ լրատվամիջոցների եւ դատարանի երաշխավորման անհրաժեշտությունը:

«Կառավարող կուսակցությունը ստացել է սահմանադրական մեծամասնություն, ինչը պատասխանատվություն է վերապահում, թե ստեղծված իրավիճակը չի՞ օգտագործվի, արդյոք, քաղաքական վրեժխնդրության եւ լրատվամիջոցների ճնշման համար: Առանց ազատ լրատվամիջոցների եւ դատարանի՝ ժողովրդավարություն գոյություն չունի: Մենք գիտենք, որ այդ կապակցությամբ հիմնախնդիրներ կան, որոնք ընտրությունների վրա ազդեցություն գործեցին: Վրաստանում անցկացված ընտրություններից որոշակիորեն դուրս մղվեց քաղաքական սպեկտրը»,- նշեց Աննա Գոմեսը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՇԱՐԺԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ-ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

 შემოსავლების სამსახური

Եկամուտների ծառայության շարժական սերվիս-կենտրոնի կողմից մինչեւ նոյեմբերի 30-ը, RS CAR սպասարկում կմատուցի այն տարածաշրջաններում, որտեղ եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններ եւ տարածաշրջանային ներկայացուցչություններ չկան:

Շարժական սերվիս-կենտրոնները (միկրոավտոբուսները) հագեցված են արդի տեխնիկական միջոցներով: Հարկատուները, առանց բնակավայրերից դուրս գալու, կկարողանան ժամանակին իրականացնել անհրաժեշտ գրառույթները, ստանալ տարբեր տեսակի էլեկտրոնային սպասարկումներ:

Շարժական սեվիս-կենտրոնի օգնությամբ հարկատուները կարող են ստանալ հետեյալ էլեկտրոնային սպասարկումները՝ խորհրդատվություններ Վրաստանի հարկային օրենսգրքի եւ համապատասխան նորմատիվային ակտերի կապակցությամբ, եկամուտների ծառայության էլեկտրոնային էջից օգտվելու նպատակով ավտորիզացման դիմումների ընդունումն ու գրանցումը, միկրո/փոքր գործարարության եւ ֆիքսացված հարկի հարկատուների կարգավիճակի շնորհման/անվավեր ճանաչման, նաեւ բարձրալեռ գոտու արտադրության կարգավիճակի շնորհման/դադարեցման դիմումների ընդունումը: Միաժամանակ, կիրականացվի եկամուտների ծառայության իրավասությունների շրջանակներում համապատասխան տեղեկանքների (հարկային պարտքերի, հարկատուի գրանցման, ՀԱՀ-ի գրանցման, եկամուտների մասին եւ այլն) հանձնումը եւ այլն:

ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆ

Մ.ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՕԴԵՍԱՅԻՆ

Նոյեմբերի 7-ին Միխեիլ Սաակաշվիլին նահանգապետարանի առջեւ անցկացրած մամլո ասուլիսում հայտարարեց Ուկրաինայի Օդեսայի մարզի նահանգապետի պաշտոնից պաշտոնաթող լինելու մասին:

Նրա խոսքով, որոշում է ընդունել պաշտոնաթող լինել այն բանի կապակցությամբ, որ իշխանությունները չեն ցանկանում պայքարել կոռուպցիայի դեմ:

«Ստեղծված իրավիճակում ես որոշեցի պաշտոնաթող լինել եւ պայքարի նոր փուլ սկսել»,- հայտարարեց Միխեիլ Սաակաշվիլին եւ հավելեց, որ, չնայած Ուկրաինայում տեղի ունեցած իշխանափոխությանը, երկրում ծաղկում է կոռուպցիան, եւ «ինչպես որ թալանում էին, այդպես էլ թալանում են»: Նա նշել է, որ իր համար «վերջին կաթիլ» է դարձել պաշտոնյաների եկամուտների վերաբերյալ էլեկտրոնային հայտարարագրերի հրապարակումը:

Վրաստանի նախկին նախագահը խիստ քննադատության ենթարկեց նաեւ Ուկրաինայի նախագահին: Նրա խոսքով, Պյոտր Պորոշենկոն անձամբ աջակցում է Օդեսայի մարզում գործող երկու կլաններին, որոնք իրականում վերահսկում են ողջ մարզը:

Օդեսայի նահանգապետի պաշտոնից Միխեիլ Սաակաշվիլու պաշտոնաթողության մասին հայտարարությանը նախորդել էր Օդեսայի մարզի ոստիկանության պետ, Սաակաշվիլու դրածո Գիա Լորթքիփանիձեի պաշտոնաթողությունը:

Նոյեմբերի 9-ին Ուկրաինայի կառավարությունը բավարարեց պաշտոնաթողության դիմումը: Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն այն արդեն ստորագրել է:

Ինչպես տեղեկացնում են ուկրաինական ԶԼՄ-ները, Միխեիլ Սաակաշվիլին արդեն ծրագրել է հիմնել քաղաքական նոր կուսակցություն, եւ այն անվանել «Ալիք»:



ՍԱՆԴՐԱ ՌՈՒԼՈՖՍԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻՑ

Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու կինը՝ Սանդրա Ռուլոֆսը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տեղեկացրել է պատգամավորական մանդատից հրաժարվելու մասին: Այդ մասին հայտարարեց հանձնաժողովի մամուլի խոսնակ Աննա Միքելաձեն: Նրա խոսքով, այդ խնդրանքով Ռուլոֆսը պետք է դիմի խորհրդարանին, քանզի այն կարող է միայն ընդունել նման որոշումը:

Նշենք, որ խորհրդարանական ընտրություններին Սանդրա Ռուլոֆսը, որպես մեծամասնական պատգամավոր Զուգդիդիից, հրաժարվեց մասնակցել ընտրությունների երկրորդ փուլին, թեպետ որպես «Միասնական ազգային շարժման» ընտրացուցակի երկրորդ համար, նա ընտրվել էր երկրի խորհրդարանի կազմում:

ԿՈՄՈՒՆԱԼ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՓՈՓԽՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ՉԿԱՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի էներգետիկայի նախարար Իլիա Էլոշվիլին, ներկա դրությամբ կոմունալ սակագների վերանայման նախադրյալներ գոյություն չունեն:

Պատասխանելով «Թելասի», «Էներգո պրո Ջորջիա» եւ «Ջորջիան Վոտեր ենդ Պաուեր» ընկերությունների կողմից սակագների վերաբերյալ բարձրացված թեմայի մասին լրագրողների հարցին, էներգետիկայի նախարարն ընդգծեց, որ սակագների սահմանման իրավասությունը պատկանում է էներգակարգավորման ազգային հանձնաժողովին:

«Մենք սակագների փոփոխման նախադրյալներ չենք տեսնում: Դա ընթացակարգ է, որը նշված է հանձնաժողովի կանոնադրության մեջ: Ներկա դրությամբ սակագների ավելացման համար նախադրյալներ չեմ տեսնում»,- ընդգծեց Իլիա Էլոշվիլին:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(11 նոյեմբերի)

Ազգային բանկի կողմից նոյեմբերի 11-ի համար սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ԱՄՆ դոլարի եւ լարիի հարաբերակցությունը՝ առքը - 2,435, վաճառքը - 2,505, եվրո-լարի առքը - 2,624, վաճառքը - 2,750, դրամ-լարի՝ առքը - 0,0039, վաճառքը - 0,0056:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԼԱՐԻԻ ՀԵՐԹԱԿԱՆ «ՌԵԿՈՐԴԸ»

Վրաստանի ազգային տարադրամի՝ լարիի արժեզրկումը շարունակվում է, վերջին տվյալներով, դոլարի համեմատությամբ լարիի համարժեքը կազմել է 2,45, ինչը աղետալի հետեւանքներ կարող է ունենալ փոքր եւ միջին գործարարների, երկրի բնակչության, ընդհանրապես երկրի համար:

Գաղտնիք չէ, որ Վրաստան ներկրվում է ինչպես սննդամթերքների, վառելանյութի, այնպես էլ՝ առաջին անհրաժեշտության ապրանքների գրեթե 80 տոկոսը: Իսկ ներկրվող ապրանքները գնվում են դոլարներով եւ վաճառվում են լարիով: Նման պայմաններում, ապրանքների գների ավելացումը ներկրողների համար դառնում է օրվա պահանջ, թեպետ, մյուս կողմից, դա կտրուկ գցում է ապրանքների իրացման ինտենսիվությունը՝ բնակչության գնողունակության նվազեցման պատճառով:

Ստեղծված իրավիճակում կառավարությունը, հետեւաբար նաեւ Ազգային բանկը, չեն կարող ակտիվ միջամտել ազգային տարադրամի կուրսի կայունացման գործում, քանզի խորհրդարանական ընտրություններից հետո, ներկայիս անցումային փուլում, նորընտիր խորհրդարանի, նորովի ձեւավորվող կառավարության պայմաններում, ֆինանսական գործերում իրավասու ոչ մի գերատեսչություն չի կարող արդյունավետ քայլեր իրականացնել ստեղծված իրավիճակի կարգավորման ուղղությամբ: Մի խոսքով, լարիի կուրսը ինքնահոսի է մատնված, անկումը շարունակվում է: Եվ հատկանշական է այն, որ այդ միտումը կշարունակվի: Համենայնդեպս, մինչեւ կառավարության նոր կազմի ձեւավորումը: Միայն դրանից հետո, կարելի է հուսալ, որ լարիի կուրսը որոշակիորեն կկայունացվի, թեպետ ակնհայտ է, որ լարիի նախկին եւ ներկայիս կուրսերի միջեւ առկա ահռելի տարբերությունը հաղթահարել չի հաջողվի, հետեւաբար երկիրը, նրա բնակչությունն ստիպված հարմարվելու է ֆինանսական նոր իրականությանը:

ՆՇՎԵՑ ՎՐԱՑ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ՝ «ՍՈՒԼԽԱՆ ՍԱԲԱ ՕՐԲԵԼԻԱՆՈՒ» ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողների համար, Վրաց դիվանագիտության օրվա կապակցությամբ, սահմանեց «Սուլխան Սաբա Օրբելիանու» անվան կրթաթոշակ:

«Սուլխան Սաբա Օրբելիանու» անվան կրթաթոշակի սահմանման վերաբերյալ հայտարարությամբ երկրի նախագահը հանդես եկավ միջազգային հարաբերությունների ուսանողների հետ նախագահական նստավայրում, որտեղ էլ նշվեց Վրաց դիվանագիտության օրը:

«Ինչպես վրացական նոր պետությունը եւ վրաց նոր դիվանագիտությունը, 25 տարեկան է նաեւ Թբիլիսիի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը: Ելնելով դրանից, որոշեցի ֆակուլտետի համար սահմանել վրաց նշանավոր դիվանագետներից մեկի՝ «Սուլխան Սաբա Օրբելիանու» անվան կրթաթոշակ, եւ հուսով եմ, որ այս քայլը է'լ ավելի կուժեղացնի ձեր գործունեությունը»,- ընդգծեց նախագահը՝ դիմելով ուսանողներին:

Վրաստանի նախագահը շնորհավորեց Վրաց դիվանագիտության օրվա առթիվ եւ առանձնակի երախտագիտություն հայտնեց բոլոր սերունդների վրաց դիվանագետներին, արտաքին գործերի նախարարությանը, նախարարին, Թբիլիսիի պետական համալսարանին եւ մյուս բուհերին, որոնք այդ ուղղությամբ նոր սերունդներ են նախապատրաստում:

Ստորեւ ներկայացնում ենք միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանողներից մեկի, այդ հանդիպման մասնակից՝ Սերգեյ Դարբինյանի հետ հարցազրույցը:

ՍԵՐԳԵՅ ԴԱՐԲԻՆՅԱՆ. «ԿԱՐՈՂ Է ԵՎ ԴԱՌՆԱՄ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ...»

Վրաստանի նախագահի նստավայրում կայացած հանդիպման ավարտից հետո, նկատեցինք, որ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ լուսանկարվելուց հետո, մի երիտասարդ մոտեցավ իր երկու հասակակիցներին եւ, որքանով ինձ թվաց, իրար հետ սկսեցին խոսել հայերեն:

Հետաքրքրվեցի, մոտեցա ու դիմեցի վրացերեն. «Տղաներ, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսանո՞ղ եք ու այդտե՞ղ եք սովորել այդքան լավ հայերենը»:

- Իրոք, այդ ֆակուլտետի ուսանողներ ենք, սակայն հայերեն մեզ չեն սովորեցնում, առաջին կուրսեցիներ ենք, Ախալքալաքիից,-վրացերենով պատասխանեց պատանին, որի անունը, ինչպես պարզվեց, Սերգեյ էր, ազգանունը՝ Դարբինյան: Իսկ նրա հետ զրուցակից ուսանողներն էին Մարսել Մանայանը՝ Նինոծմինդայի շրջանի Հեշտիա գյուղից, Գիորգի Սիրականյանը՝ Գանձայից եւ Կարո Պետրոսյանը՝ Ախալքալաքիի շրջանի Խուլգումո գյուղից:

Եվ շարունակեցինք հարցազրույցը Սերգեյ Դարբինյանի հետ.

- 4+1 ծրագրո՞վ եք ընդունվել:

- Այո,- հաստատեց Սերգեյը:

- Ձեզանից բացի, կուրսում երկրի հայկական դպրոցների շրջանավարտներ կա՞ն:

- Այո:, շատ ենք:

- Իսկ բարձր կուրսերո՞ւմ եւ մյուս ֆակուլտետներո՞ւմ:

- Բարձր կուրսերում էլ կան, մյուս ֆակուլտետներում էլ:

- Քանի որ այսօր նշվում է Վրաց դիվանագիտության օրը եւ ձեզ այստեղ են հրավիրել, հետեւաբար, որոշել եք դիվանագետ դառնա՞լ:

- Այո, նման ցանկություն ունեմ ե'ւ ես, ե'ւ մյուս մեր ուսանողները:

- Եթե, իրոք որոշել եք դառնալ դիվանագետ, ապա, հիանալի որոշում եք կայացրել: Իսկ կարո՞ղ եք թվարկել ծնունդով այն վրաստանցիների ազգանունները, ովքեր այդ ասպարեզում նշանակալի դեր են ունեցել:

- Սկսեմ,- ժպտաց Սերգեյ Դարբինյանը: - Էդուարդ Շեւարդնաձեն, որը 1985-ից մինչեւ 1990 թվականը Խորհրդային Միության արտաքին գործերի նախարարն էր, թբիլիսցի Լեւոն Կարախանը, որը Խորհրդային Միության արտաքին գործերի առաջին ժողկոմ Գիորգի Չիչերինի առաջին տեղակալն էր, ապա դեսպան՝ Չինաստանում ու Թուրքիայում, մեկ այլ թբիլիսցի Եվգենի Պրիմակովը՝ 1995-ին Ռուսաստանի ԱԳ նախարարն էր, իսկ ապա՝ զբաղեցրեց այդ երկրի վարչապետի պաշտոնը, կախեթցի Սերգեյ Իվանովը՝ նա մինչեւ 2004 թվականը ղեկավարում էր Ռուսաստանի արտաքին գերատեսչությունը, Ռուսաստանի ներկայիս արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն էլ է ծնունդով թբիլիսցի: Մեր տարածաշրջանից, Սամցխե-Ջավախեթիից էլ ունենք ճանաչված դիվանագետ՝ Ախալցիխեի շրջանի Ծղալթբիլա գյուղից Մովսես Աբելյանը՝ մինչեւ 2003 թվականը ՄԱԿ-ում գլխավորում էր Հայաստանի ներկայացուցչությունը, իսկ այս տարվա հունվարից՝ դարձավ ՄԱԿ-ի գխավոր քարտուղարի տեղակալ: Շարունակե՞մ...

- Ոչ, բավական է: Այսօրվա հանդիպմանը Վրաստանի նախագահն իր խոսքում, մասնավորապես, ասաց. «Դուք այն նոր սերունդն եք, որը ապագայում ստանձնելու է այս բարդ առաքելությունը, եւ ապահովելու այն, որ մեր երկրի շահերը լինեն որակավորված, պաշտպանված ու ուժեղացված»: Դուք ինքներդ, ինչպե՞ս եք պատկերացնում այդ առաքելությունը:

- Չերչիլը նշում էր, որ դիվանագիտությունը անհնարինը հնարավոր դարձնելու արվեստն է: Կարծում եմ, երկրի շահերի համար անհնարինը հնարավոր դարձնելն էլ հանդիսանում է դիվանագետի գլխավոր առաքելությունը:

- Ի՞նչ եք կարծում, հնարավոր է, որ այսօր միջազգային հարաբերությունների ֆակուլտետում սովորող ջավախահայերից որեւէ մեկը ժամանակին դառնա երկրի արտաքին գործերի նախարար...

- Իսկ ինչո՞ւ ոչ, բացառված չէ, կարող է եւ դառնամ՝ ես, կամ մեկ ուրիշը, մեր ֆակուլտետում սովորող ցանկացած ուսանող: Թեպետ, նման նշանակումը առաջինը կլիներ մեր երկրամասի համար: Գուցեեւ լինի, մի 20-25 տարի հետո... Չէ՞ որ Մովսես Աբելյանը կարողացավ դառնալ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, Էդուարդ Շեւարդնաձեն՝ Խորհրդային Միության, իսկ Սերգեյ Լավրովը՝ Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար: Ուրեմն, մենք էլ կարող ենք հավակնել դրան, ուղղակի պետք է դառնալ բարձր մակարդակի արհեստավարժ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԻՋԱԴԵՊ

ՉԻՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵՑ ԵՎ ԲԱՎԱՐԱՐԵՑ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ինն օրյա գործադուլից հետո, չինական «Չինական երկաթուղու 23-րդ բյուրո» ընկերության ներկայացուցիչները ներողություն խնդրեցին տեղի բնակիչների եւ վարձու բանվորների նկատմամբ ֆիզիկական բռնության համար ու բավարարեցին բանվորների պահանջները:

Վերջերս Խարագաուլիի մունիցիպալիտետի Ջվարե գյուղում տեղի ունեցած միջադեպը լայն արձագանք առաջացրեց ողջ երկրում: Խաշուրի-Զեստափոնի երկաթգծի հատվածում նոր թունելի շինարարությունն իրականացնող չինական «Չինական երկաթուղու 23-րդ բյուրո» ընկերության ներկայացուցիչները ֆիզիկական հաշվեհարդար տեսան շինարարությունում աշխատող տեղի բնակիչների ու վարձու բանվորների նկատմամբ:

Ինչպես տեղեկացրել է «Վրաստանի երկաթուղայինների նոր արհմիությունը», միջադեպը, որի արդյունքում չորս բանվորների եւ երկու տեղացիների մարմնական վնասվածքներով տեղափոխել են շրջկենտրոնի՝ Խարագաուլիի հիվանդանոց, ծագեց նրանից, որ ընկերության վարչության աշխատակիցներն անտառից վառելափայտը դուրսբերելու համար ծեծեցին երկու տեղացիների: Գործին միջամտեց ոստիկանությունը: Քաղաքացիներին մարմնական վնասվածքներ հասցնելու մեղադրանքով ձերբակալվել են ընկերության երեք ներկայացուցիչները: Չինաստանի այդ երեք քաղաքացիներին մեղադրանք է ներկայացվել Վրաստանի քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով:

Նշենք, որ չինական ընկերության կողմից վարձած բանվորները մի քանի անգամ չէ, որ բողոքում են աշխատանքային ծանր պայմանների եւ փոքր վարձատրության պատճառով:

Ճիշտ է, վերոնշյալ իրադարձություններից հետո, չինական ընկերությունը ներողություն խնդրեց եւ բավարարեց շինարարությունում աշխատող բանվորների պահանջները, սակայն, ցավոք, միշտ չէ, որ օտարերկրյա ընկերությունները զիջումների են դիմում:

Հատկանշական է, որ Վրաստանի արհմիությունների միավորումը մի քանի անգամ արդեն դիմել է Վրաստանի ՆԳ նախարարությանը՝ օտարերկրյա ընկերությունների կողմից իրականացվող կառույցներում աշխատող Վրաստանի քաղաքացիների անվտանգության ապահովման հարցով, թեպետ այդ առումով դրական տեղաշարժերը քիչ են: Ժամանակն է, որ համապատասխան գերատեսչությունները օտարերկրյա ընկերությունների հետ գործարքները կնքելիս՝ առավել տեղ հատկացնեն աշխատողների անվտանգության, նրանց համար աշխատանքային ու կենցաղային նորմալ պայմանների ստեղծման հարցերին, հակառակ դեպքում, բացառված չէ միջադեպերի կրկնությունը, գուցեեւ առավել մեծ մասշտաբներով:

ՎԱՐԿԱՆԻՇ

ԱՌԱՋԸՆԹԱՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ «ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-2017» ԶԵԿՈՒՅՑՈՒՄ

«Գործարարություն-2017» (Doing Business) զեկույցում ընդգրկված 190 տնտեսությունների շարքում Վրաստանը զբաղեցնում է 16, իսկ Հայաստանը 38-րդ տեղը: Անցյալ տարվա՝ «Գործարարություն-2016» զեկույցում զբաղեցրած 23-րդ տեղի փոխարեն Վրաստանը յոթ հորիզոնականով բարելավել է դիրքերը, իսկ Հայաստանը անցյալ տարվա 43-րդ տեղից առաջադիմել է հինգ հորիզոնականով:

«Գործարարություն 2017» զեկույցում Վրաստանը 2,48 կետով բարելավել է նաեւ իր՝ հեռավորություն սահմանագծից ցուցանիշը՝ անցյալ տարվա 80,20-ի փոխարեն հասցնելով 77,72 տոկոսի: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, այն այդ ցուցանիշը բարելավել է 1,47 կետով անցյալ տարվա 73,63%-ից հասնելով 72,16%-ի: Նշենք, որ «Հեռավորություն սահմանագծից» ցուցանիշն օգնում է գնահատել կանոնակարգման աշխատանքների բացարձակ մակարդակը եւ թե ինչպես է այն բարելավվում ժամանակի ընթացքում: Տնտեսության հեռավորությունը «սահմանագծից» արտահայտվում է 0-ից 100 սանդղակով, որտեղ 0-ն ցույց է տալիս ամենացածր գործունեությունը, իսկ 100-ը՝ սահմանագիծն է:

Վրաստանը, ըստ ձեռնարկված բարեփոխումների, բարելավողների լավագույն տասնյակում է: Օրինակ՝ Վրաստանն ամրապնդել է փոքր բաժնետերերի պաշտպանությունը՝ մեծացնելով կորպորատիվ հիմնական որոշումներում բաժնետերերի իրավունքներն ու դերը եւ հստակեցնելով սեփականության եւ հսկողության կառուցվածքները:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, այն հեշտացրել է գործարարությամբ զբաղվելը զեկույցում ընդգրկված երկու ոլորտում՝ վարկի ստացում եւ պայմանագրերի կիրարկում: Մասնավորապես, երկիրն ուժեղացրել է վարկերի հասանելիությունը՝ ընդունելով գործարքների ապահովության մասին նոր օրենք, որով հիմվել է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ժամանակակից եւ կենտրոնացված գրանցամատյան եւ բարելավել է իր՝ վարկերի մասով տեղեկատվական համակարգը՝ անձնական տվյալների պաշտպանության մասին նոր օրենքի ընդունմամբ:

Հայաստանը հեշտացրել է նաեւ պայմանագրերի կիրարկումը՝ կամավոր հաշտարարությունը կանոնակարգող համապարփակ գլուխ ներդնելու եւ հաշտարարությունից օգտվելու նպատակով կողմերի համար ֆինանսական խթաններ հիմնելու արդյունքում:

Զեկույցն ամբողջությամբ եւ ուղեկցող տվյալների խմբերը մատչելի են՝ www.doingbusiness.org կայքում»:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ